



## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

### ՇԱՏԵ ԱՐՔԵԴԻՄԿՈՂՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻՒ ՕՐԸ

(19 մարտի, կիրակի, 2000 թ.)

«Յանոն Նօր և Որդույ և Հոգույն Սրբոյ»:

«Նայր, մեղայ յերկինս և առաջի Ջոյ» (Ղուկաս ԺԵ 21):

Այսօր, սիրելի քույրեր և եղբայրներ, մեր Եկեղեցին կբանա մեր առջև Ավելարանի այն էջը, որ կպատմմի, թե Դիտուս ինչպես խոսեցավ իր առաքյալներուն, իր աշակերտներուն և անոնց պատմոց Անառակ որդիի առակը: Անիկա ըսավ, թե կար մեծահարուսդ անձնավորություն մը, որ ուներ երկու զավակներ: Կրտսերը օր մը որոշեց հեռանալ իր հոր գոտուն: Գնաց իր հորը և ըսավ. Տուր ինձի ժառանգության իմ բաժինը և ես երթամ, իմ կյանքն ապրիմ: Նայրը չմերժեց: Նայրը դվագ անոր իր զանձեն, ինչը որ բաժինն էր իր փոքր որդվոյն, և այդ որդին առած հորը զանձը՝ հեռացավ անոր գոտուն ու գնաց այլ աշխարհ: Այնպես անիկա չգործածեց իրեն դրված հարսկությունը, որպեսզի նոր գոտն մը շինե, նոր կյանք մը սկսի, այնպեղ ընդունիք կազմե, զավակներ ծնի, շարունակե ըլլալ հոր նման, այլ ճիշդ հակառակը՝ անիկա շրջապարփակ ընկերներով, որոնք միայն կերուխումի և հաճույքի կյանքը գիտեն, ինք ալ անոնց միացած մսինց կարծ ժամանակի մեջ այն ամբողջ զանձը, որ բերած էր իրեն հետ: Զեխությամբ ապրեցավ, մեղքի կյանքը ապրեցավ, միայն հաճույք փնտրեց և սակայն, ինչպես աշխարհի մեջ ամեն բան, որ այս աշխարհին կպատկանի, իր այդ կյանքը վերջ մը ունեցավ, որովհետք ծախսեց այն ամբողջ զումարները, որ բերած էր իրեն հետ և ինկավ ծայրահեղ աղքագության մեջ: Գնաց այնպեղ ազարակապանի մը և գործ խնդրեց, և անիկա գործ դվագ անոր: Այդ

գործը այն էր, որ արածեր անոր խոզերը: Այնքան խեղճացած վիճակի մեջ էր ան, որ սկսավ ուրիշ, ինչ որ կպրվեր խոզերուն, սակայն մի օր արթևագ, զգաց, թե ինչ սխալ ճամփով զացած էր, կեցավ և ըստ ինքնզինքին. Ես, որ կրառապահ այսրեղ, ով զիվն, թե իմ հորս գանձ մեջ ամենապարզ սպասավորները որքան ավելի լավ կապցին: Եվ որոշեց եր երթալ իր հորը բով և ըստ անոր. Ես մեղանչեցի բո առջև, ներս ինձի և թույլ դրուր, որ ես վերադառնամ թեզ մուր և սպասավորներու նման աշխարհին թեզի համար: Եվ այս ակնկալությամբ, որ հայրը պիտի ընդունի զինք, բանց վերադարձի ճանապարհը, նկավ իր հորը դրուր: «Հայրը եր իմացավ, որ կրտսեր, սիրեցյալ որդին եր կվերադառնա, հրահանգ դրավ, որ մեծ խնջույք մը սարքեն, նոր հազուսիներ թերեն: Եվ եր մուրեցավ իր զավակը, արդեն իսկ խնջույքը սարքված էր գանձ մեջ, և հայրը դժան առջև թերը բացած կապասեր: Եվ հայրը լսեց իր զավակի զղումի ձայնը, որ կրտսեր. «Հայր, ես մնանչեցի բո առաջ: Հայրը ընավ չպախարակեց իր որդին, ընդհակառակը՝ գրկեց նրան և դրարավ ներս, մարտու հազուսիներ հազցուց անոր և հրամիրեց կերտիչումի. խնջույքի և ուրախության: Երբ մեծ եղրայրը դժանվ այդ բոլորը, նախանձելով մուրեցավ իր հորը և ըստ ավ. Ես իմ ամրող կյանք նվիրած եմ աշխարհանքին, հավաքարիմ եմ թեզի, թեզի հետ կաշխարիմ և օր մը ինձի համար խնջույք չըրվիր: Այս բու գործան, որ մսխեց բու դրամդ, ապրեցավ սիսակ կյանքրով, ապրեցավ մեղքի կյանք մը, ապրեցավ ապերախսության կյանք մը, ապրեցավ աշխարիի հաճույքներու կյանք մը, դուն անոր ընդունեցիր և պարվեցիր: Եվ հայրն ըստ. Տղաս, դուն միշտ ինձի հետ ես, և իմ բարիքները բուկի են, սակայն այդ բու եղրայրը մնուած էր և ողջնցավ, կորսված էր և գպնվեցավ:

Եվ այս առակը եր պարմեց Դիտու իր աշակերտներուն, բացադրեց իրենց, թե ամն մարդ, որ կինուանա հորը դրումնն, անշուշր հորը դրումը նյութականությունը չէ միայն, այլ կինուանա կանոնավոր կյանքեն, կինուանա դան ջնրմութեննն և կերթա իրեն համար որիշ կյանք մը փնտրելու, աշխարիկ և բոլորովին գեխության կյանք մը փնտրելու: Այդ մարդը կերթա դեպի կորուսպ: Եվ այս Մեծ պահոց շրջանը մնեք այս Ավելարանը և առակը կկարդանը՝ ըսելու համար բոլոր հավաքացյալներուն, թե այս օրերը այն օրերն են, երբ գարագույրը փակ է ոչ թե ջնդունելու համար մեր աղորժները, այլ դրականի մեր ուշարությունը դառնա դեպի մնզ, յուրաքանչյուրը քննե ինքնզինք, դիսնե, թե իր կյանքը ո՞ր ուղղությամբ է հորը դրումնն ինուանող ուղղությամբ է, թե՞ վերադարձի ճանապարհն է, թե՞ այն վիճակն է, որ մարդը կըսն. «Հայր, մնայ յերկինս և առաջի Գո», այսինքն՝ կզնչա իր բոլոր մնցերուն համար և կընդուր վերադարձի ճանապարհը: Այդ վերադարձի ճանապարհն է, որ մնզ պիտի առաջնորդեն, սիրելի հավաքացյալներ, դեպի մնր Եկեղեցին: Մեր Եկեղեցին է մնր երկնավոր Հոր դրունը, մնր Եկեղեցին է, որ ունի այն ջնրմությունը, որ կծնի մնր հավաքքեն, մեր Եկեղեցին է մնզ հրավիրողը միշտ և ըստող. Գրկաբաց պիտի ընդունիմ ես բոլոր անոնց, որոնք պիտի վերադառնան ինձի ապաշխարությամբ և զղումով, և ես ոչ միայն պիտի ներևմ անոնց մնորերը, այլ նաև պիտի կրկնեմ անոնց

Հիսուսի խոսքը, թե Աստված շաբ ավելի պիտի երճի մեկ մեղավորի համար, որ ես կվերադառնա, քան հարյուր արդարներու համար: Այդ մեղավորներն ենք մենք բոլորս ալ, բոլորս ալ կյանքի մեկ հանգրվանին մոռցած ենք Աստվոծ բարիքները և ուզած ենք ապրի միայն ու միայն մեզի համար, հեռացած ենք աղոթքեն, հեռացած ենք սրբություններեն, հեռացած ենք մեր Եկեղեցին և մոռցած ենք, թե մենք՝ մանուկներս, երբ մանուկ էինք, մեզ գրկեց, ավագանի ջուրին մեջ լվաց ու մաքրեց մեզ, մենք կմոռնանք, թե մեզ մաքրելու հետո Սուրբ Գրիգոր Լուսավորիչ աջով օրինված Սուրբ Մյուսոնը լցվեցավ մեր ճակարին իրքն եռու և մեզի բերավ ու վրավ Սուրբ Հոգիի շնորհները: Մենք կմոռնանք, թե Նայ Եկեղեցիի ծնունդ ենք մենք մեր մանուկ հասակնեն, սակայն երբ մեծցած ենք, շաբ հաճախ չենք պահած մեր հավաքարմությունը այն Եկեղեցին, որ կծնի մեզ ի ջրու և Հոգվո: Մենք մոռցած ենք, որ այս Եկեղեցին եղավ օրրանը մեր ազգային կյանքին, մենք մոռցած ենք, թե այս Եկեղեցին հավաքած է հայու որդիները, ուր որ ալ գրնվին անոնք, և սորվեցուցած է անոնց ըլլալ քրիստոնյա, սորվեցուցած է անոնց ըլլալ հավաքացյալ և սորվեցուցած է անոնց իրենց հայրը նկատել ոչ միայն մարմնավոր հայրը, այև երկնավոր Հայրը, որ հերկինս է: Եվ մենք, սիրելիներ, այսօր, երբ պաշշարության այս օրերը կապրինք, գիտնանք, թե մեր փրկությունը մեր Եկեղեցին է, ոչ թե քարաշեն այս փաճարները միայն, այլ այն Եկեղեցին, որ Աստվոծ արքայությունն է մեր հոգիներուն մեջ: Երբ աշակերպները մի օր ըսին Հիսուսին. «Ձոյց մեզ, Տէր, զարքայութիս», անիկա ըստավ անոնց. Արքայությունը Աստվոծո, այսինքն՝ Հոր, ուր Տերը կիշխե, անիկա ձեր սիրութին մեջն է, այն սրբերուն մեջ, ուր կա իրապես Հիսուսի ներկայությունը, ուր կա Աստվոծո իշխանությունը: Եվ այս զգացումով է, որ այսօր Անառակ դրդի այս առակը պատմելով՝ մեր Եկեղեցին կուզե ըսել բոլորին. Բռնեք վերադարձի ճանապարհը, եկեք և այս փակյալ խորանին առջև զարկեք ձեր կուրծքին և խնդրեցեք Աստվոծ ներողությունը, խնդրեցեք Աստվոծ կարենցությունը, խնդրեցեք Աստվոծ գութը և ողորմածությունը, և Ան պիտի ընդունի ձեր աղոթքը, և երբ բացի խորանը, Անիկա իր Նարության ավերիտով պիտի ըսե ձեզի. Եթե իրապես ազագեցաք ձեր մեղքի կյանքնեն, եկեք, օրինյալներ, մուեք արքայությունն Աստվոծը:

Արդ, կմաղթեմ ես բոլորի, սիրելի հավաքացյալներ, և կըսեմ. Կամնուն պահեցեք Եկեղեցին: Դուք բոլոր ալ գիտեք, թե 1700-ամյակի առիթով շաբ Եկեղեցիներ և վանքեր, որոնք խոնարիված էին, եպ կրարձրացնեն իրենց գմբեթը, և այդ զմբեթին վրա կրարձրանա խաչը: Եկեղեցին, սակայն, այդ շարված քարերը չեն, շարված քարերը խորհրդանիշն են: Այդ շարված քարերը խորհրդանիշն են այն Եկեղեցին, որ յուրաքանչյուրիս սրբի մեջ պիտի կանգնի և պիտի կանգնի այնպես, որ մենք լսենք Աստվոծ կանց, լսենք դողամշները այն զանգակներուն, որոնք կիրավիրեն մեզ աղոթքի, կիրավիրեն մեզ ապաշխարության, կիրավիրեն մեզ բարի կյանքի: Որովհետք իրական քրիստոնյան ան չէ, որ չի մեղանչեր, իր գործով անարժան կգրնվի, այլ ան է, որ կիրավիրվի ի կարգ քրիստոնեության: Այսպես կըսե խոսպո-

վանանքի մեր բանաձևը. «Ի կարգս բրիստոնեության հրավիրեցա և զործովս անարծան գրա, զիրելով զշարն կամավ կորացա և ի բարյաց զործոց ևս ինձեն հեռացա»: Այս իրական ապաշխարությունը, այն, որ հավասարակշռներ մեր զործերու ոչ թե միայն դարպագարքելու համար ինչ որ չար ըրած էինք, այլ հաշվելու որքան բարիք զործած ներ: Երական բրիստոնյան ան է, որ իր բարի զործերով կիրկվի, իր հավաբրով, իր աղոթքով, որ բարի զործերու ամեննեն զեղեցիկներն են նաև իր ընկերոցը սիրող, ինչպես ըստ Տերն իր առաջավելուն. Ամրող օրենքները կամփուփին երկու օրենքի մեջ. Սիրն ըստ Տեր Աստվածոյ ամրող սրբովդ և Սիրն ըստ Ընկերոյ ըստ անձին նման: Այդ սիրո մեջ է, որ կաճի բրիստոնյայի հոգին և կառաջնորդս զինքը բարի զործերու: Եվ այսօր, եթի բոլորս ալ կեցած Աստվոծ յորանին առաջ, կրսննը. «Հայր, մեղայ յերկինս և առաջի թոյ», Վարահ պիտի ըլլանք, թե մաքոր սիրտեն բիսած մեր աղոթքը պիտի լսվի, և մենք պիտի վերադառնանք գում հանդարպված մեր մաքոր հոգիներով, Վարահ ըլլալով: Թե Հայր, որ հերկինս է, լսեց մեր աղոթքը և լսեց մեր աղոթքը ոչ միայն մենք մեզի համար, այլ մեր ազգի համար, մեր գառապող ժողովորդին համար, ըսկու համար Աստվոծ. «Փառք Քեզ, Տեր, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տեր, փառք թեզ»:

